ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Քոչարյան,

Ի պատասխան Ձեր 08.01.2024թ. գրության՝ տեղեկացվում է.

2018-2023թթ. ընթացքում հիմանորոգվել և շահագործման են հանձնվել՝ «Երևանի Հ.Կարապենցի անվան հ.6 հիմնական դպրոց», «Երևանի Մուրացանի անվան հ.18 հիմնական դպրոց», «Երևանի Գևորգ Արշակյանի անվան հ. 22 հիմնական դպրոց» (մեկ մասնաշենք), «Երևանի Վարդգես Պետրոսյան անվան հ. 51 հիմնական դպրոց», «Երևանի հ.91 հիմնական դպրոց», «Երևանի Ղ. Ալիշանի անվան հ.95 միջնակարգ դպրոց», «Երևանի Ջ.Աբրահամյանի անվան հ.111 հիմնական դպրոց», «Երևանի Սամվել Հովսեփյանի անվան հ.116 հիմնական դպրոց», «Երևանի Ալ. Բլոկի անվան հ.122 հիմնական դպրոց», «Երևանի Գ.Ստեփանյանի անվան հ.135 հիմնական դպրոց», «Երևանի Մ. Խորենացու անվան հ.143 հիմնական դպրոց», «Երևանի Մ. Մեծարենցի անվան հ.146 հիմնական դպրոց», «Երևանի Ռ. Իշխանյանի անվան հ.153 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ներին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված շենքերը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ թեև դպրոցներին ամրացված գույքը համայնքային սեփականություն չէ, անհրաժեշտությունից ելնելով՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության աշխատանքային ծրագրերով, որպես աջակցություն՝ իրականացվել են «Երևանի Լևոն Շանթի անվան հ.4 հիմնական դպրոց», «Երևանի Մուշեղ Իշխանի անվան հ.5 հիմնական դպրոց» և «Երևանի Միսակ Մեծարենցի անվան հ.146 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ներին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված շենքերի տանիքների նորոգման և «Երևանի հ.108 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին պատկանող ֆուտբոլի դաշտի վերանորոգման աշխատանքներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ